ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-21-7/15-3

ք. Երևան 19 .05.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Լ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 9 547 800 (ինը միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

---

[1] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. ՆԱՀԱԿՅԱՆ	«<<ՎԱՆԳԱԿ>> ՍՊԸ Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ավան-Առինջ, 2 մկշ. 3/3շ., 36 Բանկ՝ <<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ Հ/Հ 19300 243121400 ՀՎՀՀ 010[illegible] Տնօրեն՝ Գ. Գրիգորյան

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-7/15-3 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորթուց, կապույտ գույնի /հատ/ - Գլխարկը բաղկացած է լաքապատ կոշտ հովիարից, կողամասերից, հատակից, մորթե ականջակալներից և մետաղի պարունակություն ունեցող ոսկեգույն թելով գործված երկհանգույց հյուսապարանից: Հովիարը սև գույնի, արտաքինից լաքապատ, իսկ ներքնամասը՝ սև գույնի թավշյա գործվածքից: Հովիարի ներսից տեղադրվում է 2-3մմ հաստության պլաստմասայե միջադիր: Հովիարի լայնությունը 5 սմ: Գլխարկաբոլորքի ներքնամասում ամբողջ շրջագծով արտաքինից մշակված է 2սմ լայնության երիզ, որի վրա դիմային մասում, ականջակալների տակ եզրերից ամրացվում է հյուսապարանը՝ 14մմ տրամագծով պաշտպանական գույնի պլաստմասայե կոճակներով, հյուսապարանների հանգույցների հեռավորությունը ականջակալների եզրից 56 չափսի համար 4 սմ, իսկ մնացած չափերի համար՝ համապատասխանաբար չափը մեծանում է կամ փոքրանում հեռավորության վրա: Գլխարկի երեսացուն կարվում է 2381 արտիկուլի կապույտ գույնի կիսաբրդյա գործվածքից և 1100 գրամից ոչ պակաս մակերեսային խտությամբ մոխրագույն արհեստական մորթուց, մորթախավի բարձրությունը՝ 10-13մմ: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասի մեջտեղում ամրացվում է այումինե համածուվածքից օվալաձև ոսկեգույն գլխարկանշան՝ 32 ճառագայթով:Կենտրոնական մասը ՀՀ եռագույն դրոշի գույներով շերտագծերից՝ վրայից ոսկեգույն հնգաթև աստղ:

Ներսամասը մգդակարվում է 5սմ կողմերով շեղանկյունաձև՝ԳՕՍ-20272-96, 8C5BШ արտիկուլի կապույտ կամ դեղնականաչավուն գույնի աստառով: Տաքացվող ներդիրը ներսից մշակվում է ամրացնող շերտերով և 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Գլխարկաբոլորքի բարձրությունը 9սմ: Հետնամասի մորթու լայնությունը մեջտեղում՝ 8,5 սմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Ականջակալների գլխարկահատակին ամրանում են սև կամ պաշտպանական գույնի քուղերով: Գլխարկահատակին, ականջակալների միացման տեղում համապատասխանաբար մշակվում են 4-5 մմ տրամագծով մետաղական անցքեր:

Գլխարկի ներսում աստառի վրա ճակատային մասի մեջտեղում կարվում է 5,5 x 5 սմ չափսի արհեստական կաշվե պաշտպանիչ շերտ:Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա արտացոլվում է գլխարկի չափսը, արտադրման տարեթիվը և արտադրող կազմակերպության անվանումը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները մինչև 3%: Փաթեթավորումը արկղերով, արկղի մեջ՝ երեք շարք, հավասար քանակության, առանձին-առանձին, ընդամենը ոչ ավել 54 հատից: Արկղերում գլխարկի ներսից գլխարկաբոլորքի լայնքով տեղադրվում է ստվարաթղթե օղակ, գլխարկը չճմրթելու համար: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի արտադրանքի անվանումը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, արտադրման տարեթիվ:

Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված երեսացուի և աստառի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության և արհեստական մորթու ու սինտեպոնի մակերեսային խտության վերաբերյալ եզրակացություն: Ընդ որում նմուշառումը պետք է կատարվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան մասնագետի մասնակցությամբ:

Նշանություն.

1.Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի.

1.1Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար: Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մոտքագրման՝ վերջին խմբաքանակն ներկայացնելիս:

1.2.Նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունն պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշն ստորագրում է մատակարարն, համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պետի, իսկ երեսացուի երանգը՝ նաև ավիացիայի վարչության պետի հետ և հաստատվում կամ մերժվում է ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ-վարչության պետի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված

3. Չափսերը տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:

2. Գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորթուց /հատ/ - Գլխարկը բաղկացած է լաքապատ կոշտ հովիարից, կողամասերից, հատակից, մորթե ականջակալներից և մետաղի պարունակություն ունեցող ոսկեգույն թելով գործված երկհանգույց հյուսապարանից: Հովիարը սև գույնի, արտաքինից լաքապատ, իսկ ներքնամասը՝ սև գույնի թավշյա գործվածքից: Հովիարի ներսից տեղադրվում է 2-3մմ հաստության պլաստմասայե միջադիր: Հովիարի լայնությունը 5 սմ: Գլխարկաբոլորքի ներքնամասում ամբողջ շրջագծով արտաքինից մշակված է 2սմ լայնության երիզ, որի վրա դիմային մասում, ականջակալների տակ եզրերից ամրացվում է հյուսապարանը՝ 14մմ տրամագծով պաշտպանական գույնի պլաստմասայե կոճակներով, հյուսապարանների հանգույցների հեռավորությունը ականջակալների եզրից 56 չափսի համար 4 սմ, իսկ մնացած չափերի համար՝ համապատասխանաբար չափը մեծանում է կամ փոքրանում հեռավորության վրա: Գլխարկի երեսացուն կարվում է 2381 արտիկուլի դեղնականաչավուն կիսաբրդյա գործվածքից և 1100 գրամից ոչ պակաս մակերեսային խտությամբ մոխրագույն արհեստական մորթուց, մորթախավի բարձրությունը՝10-13մմ:Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասի մեջտեղում ամրացվում է այումինե համածուվածքից օվալաձև ոսկեգույն գլխարկանշան՝ 32 ճառագայթով:Կենտրոնական մասը ՀՀ եռագույն դրոշի գույներով շերտագծերից՝ վրայից ոսկեգույն հնգաթև աստղ:

Ներսամասը մգդակարվում է 5սմ կողմերով շեղանկյունաձև՝ԳՕՍ-20272-96, 8C5BШ արտիկուլի դեղնականաչավուն աստառով: Տաքացվող ներդիրը ներսից մշակվում է ամրացնող շերտերով և 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Գլխարկաբոլորքի բարձրությունը 9սմ: Հետնամասի մորթու լայնությունը մեջտեղում՝ 8,5 սմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Ականջակալների գլխարկահատակին ամրանում են սև կամ պաշտպանական գույնի քուղերով: Գլխարկահատակին, ականջակալների միացման տեղում համապատասխանաբար մշակվում են 4-5 մմ տրամագծով մետաղական անցքեր:

Գլխարկի ներսում աստառի վրա ճակատային մասի մեջտեղում կարվում է 5,5 x 5 սմ չափսի արհեստական կաշվե կամ համարժեք պաշտպանիչ շերտ:Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա արտացոլվում է գլխարկի չափսը, արտադրման տարեթիվը և արտադրող կազմակերպության անվանումը: Բոլոր պարամետրերի թույլատրելի

եղումները մինչև 3%: Փաթեթավորումը արկղերով, արկղի մեջ՝ երեք շարք, հավասար քանակության, առանձին-առանձին, նդամենը ոչ ավել 54 հատից: Արկղերում գլխարկի ներսից գլխարկաբոլորքի լայնքով տեղադրվում է ստվարաթղթե օղակ, գլխարկը ճմրթելու համար: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի արտադրանքի անվանումը, ատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, արտադրման տարեթիվ:

Արտաքին տեսքը համաձայն հավելված 1-ի:

Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական իջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային ործագիտական լաբորատորիայի կողմից տրված երեսացուի և աստառի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային ատության և արհեստական մորթու ու սինտեպոնի մակերեսային խտության վերաբերյալ եզրակացություն: Ընդ որում նմուշառումը պետք է կատարվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան մասնագետի մասնակցությամբ:

Չափսի սանդղակ

Չափս	54	56	58	60	62	Ընդամենը
Ընդամենը %	10	39	46	4	1	100

Ծանոթություն.

1.Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի.

1.1 Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված ալանակի մաս և ենթակա է մոնտաժման՝ վերջին խմբաքանակն ներկայացնելիս:

1.2.Նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունն պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր յութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշն ստորագրում է մատակարարն, համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային առայության պետի հետ և հաստատվում կամ մերժվում է ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ- վարչության պետի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված

3.Մատակարարվող ապրանքատեսականու չափս-հասակային տվյալները՝ անկախ մատակարարման խմբաքանակից, պետք է համապատասխանի չափս-հասակային սանդղակի առնվազն 50%-ին:

3. Գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորթուց, սև գույնի /հատ/ - Գլխարկը բաղկացած է լաքապատ կոշտ ովհարից, կողամասերից, հատակից,մորթե ականջակալներից և մետաղի պարունակություն ունեցող ոսկեգույն թելով գործված ոկիանգույց հյուսապարանից: Հովհարը սև գույնի, արտաքինից լաքապատ, իսկ ներքնամասը՝ սև գույնի թավշյա գործվածքից: Հովհարի ներսից տեղադրվում է 2-3մմ հաստության պլաստմասայե միջադիր: Հովհարի լայնությունը 5 սմ: Գլխարկաբոլորքի ներքնամասում ամբողջ շրջագծով արտաքինից մշակված է 2սմ լայնության երիզ, որի վրա դիմային մասում, ականջակալների տակ զրերից ամրացվում է հյուսապարանը՝ 14մմ տրամագծով պաշտպանական գույնի պլաստմասայե կոճակներով, հյուսապարանների անգույցների հեռավորությունը ականջակալների եզրից 56 չափսի համար 4 սմ, իսկ մնացած չափերի համար՝ համապատասխանաբար չափը մեծանում է կամ փոքրանում հեռավորության վրա: Գլխարկի երեսացուն կարվում է 2381 արտիկոլի սև գույնի կիսաբրդյա գործվածքից և 1100 գրամից ոչ պակաս մակերեսային խտությամբ սև գույնի արհեստական մորթուց, մորթախավի բարձրությունը՝ 10-13մմ: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասի մեջտեղում ամրացվում է ալյումինե համաձուլվածքից օվալաձև ոսկեգույն գլխարկանշան՝ 32 ճառագայթով:Կենտրոնական մասը ՀՀ եռագույն դրոշի գույներով շերտագծերից՝ վրայից ոսկեգույն հնգաթև աստղ:

Ներսամասը մգդակարվում է 5սմ կողմերով շեղանկյունաձև՝ ԳՕՍՏ-20272-96, 8C5ВШ արտիկոլի սև կամ դեղնականաչավուն գույնի աստառով: Տաքացվող ներդիրը ներսից մշակվում է ամրացնող շերտերով և 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Գլխարկաբոլորքի բարձրությունը 9սմ: Հետնամասի մորթու լայնությունը մեջտեղում՝ 8,5 սմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Ականջակալների գլխարկահատակին ամրանում են սև կամ պաշտպանական գույնի քուղերով: Գլխարկահատակին, ականջակալների միացման տեղում համապատասխանաբար մշակվում են 4-5 մմ տրամագծով մետաղական անցքեր:

Գլխարկի ներսում աստառի վրա ճակատային մասի մեջտեղում կարվում է 5,5 x 5 սմ չափսի արհեստական կաշվե պաշտպանիչ շերտ:Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա արտացոլվում է գլխարկի չափսը, արտադրման տարեթիվը և արտադրող կազմակերպության անվանումը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները մինչև 3%: Փաթեթավորումը արկղերով, արկղի մեջ՝ երեք շարք, հավասար քանակության, առանձին-առանձին, ընդամենը ոչ ավել 54 հատից: Արկղերում գլխարկի ներսից գլխարկաբոլորքի լայնքով տեղադրվում է ստվարաթղթե օղակ, գլխարկը չճմրթելու համար: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի արտադրանքի անվանումը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, արտադրման տարեթիվ:

Արտաքին տեսքը համաձայն հավելված 2-ի:

Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված երեսացուի և աստառի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության և արհեստական մորթու ու սինտեպոնի մակերեսային խտության վերաբերյալ եզրակացություն: Ընդ որում նմուշառումը պետք է կատարվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան մասնագետի մասնակցությամբ:

Ծանոթություն.

1.Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի.

1.1Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մոնտաժման՝ վերջին խմբաքանակն ներկայացնելիս:

1.2.Նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունն պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշը ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պետի հետ և հաստատվում կամ մերժվում է ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ- վարչության պետի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված
3. Չափսերը տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:

4.՝ Թևքանշան զորատեսակի "ԿԱ" (հատ) Արտադրվում է կարմիր գույնի (ավիացիայի և օդադեսանտային՝ երկնագույն) ահուդից, դարձերեսին ձգվում է հատուկ ձգող կտորաշերտ: Արտաքին չափսերը՝ 8 սմ տրամագծով արհեստական ոսկեգույն թելով ասեղնագործված շրջանակ՝ երկու կողմից զարդակարված: Թևքանշանի վրա նույն թելով ասեղնագործվում են ՀՀ զինված ուժերի զորատեսակների նշանները ՝ համազորային- **1350**հատ, հրետանային - **300**հատ, ավիացիայի-**50**հատ, ՀՕՊզորքեր- **200**հատ, ապի- **350**հատ, հատուկ նշանակության - **150**հատ, ՌՔԿՊ զորքեր -**50** հատ, ինժեներական -**100** հատ, թիկունքային -**150** հատ, ժշկական -**100** հատ, զրահատանկային -**30**հատ,ստանդարտացման և չափագիտության-**20** հատ ՌԷՊ- **50**, հետախուզություն -**100** ատ): Թիկունքի տարբերանշանի վրա գրառումները ասեղնագործվում են սպիտակ թելով, իսկ թրի սայրը՝ արծաթագույն ելով:Արտաքին տեսքը համաձայն հավելված 5-ի:

Ծանոթություն.

1.Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի.

1.1 Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակը ներկայացնելիս:

1.2 Նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունն պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշն ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պետի հետ և հաստատվում կամ մերժվում է ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ- վարչության պետի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝	
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ
1	Գլխարկներ /գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորթուց՝ կապույտ գույնի/	հատ	200	5688	1137600		200
2	Գլխարկներ /գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորթուց/	հատ	1300	5394	7012200		1300
3	Գլխարկներ /գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորթուց՝ սև գույնի/	հատ	150	5520	828000		150
4	Թևքանշան և այլ պարագաներ /թևքանշան զոր. «ԿԱ»/	հատ	3000	190	570000	2000	1000

Ծանոթություն ապրանքատեսակները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության միջոցով:

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-7/15-3 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Գլխարկներ /գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորթուց՝ կապույտ գույնի/	18441100/5	1137600	1137600
2	Գլխարկներ /գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորթուց/	18441100/6	7012200	7012200
3	Գլխարկներ /գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորթուց՝ սև գույնի/	18441100/7	828000	828000
4	Թևքանշան և այլ պարագաներ /թևքանշան զոր. «ԿԱ»/	35811240/6		570000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ տնօրեն

Հավելված 1

Գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորքուց



Հավելված 2

Գլխարկ ձմեռային ամենօրյա, արհեստական մորքուց և գույնի



Հավելված 5

ԱՄՆՕՐՅԱ ԵՎ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ԹԵՎՔԱՆՇԱՆՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՋԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Համազորային

Ավտոմոբիլային զորքեր

Բժշկական ծառայություն

Օդադեսանտային

ՀՕՊ զորքեր

Հրթիռա-հրետանային զորքեր

Կապի զորքեր

Թիկունք

Ավիացիա

ՌՔԿՊ զորքեր

Տանկային զորքեր

Ինժեներական զորքեր

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-7/15-3 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-7/15-3 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն